ՀՀ Տավուշի մարզի Բերքաբերի գյուղապետարանը

հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխա-

տակազմի 1-ին կարգի մասնագետի / ծածկագիր 3.2-2 /

համայնքային ծառայության թափուր պաշտոն զբա-

ղեցնելու համար

21.10.2014 թ.

Տավուշ՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն

Հայտատու՝ ՀՀ Տավուշի մարզի Բերքաբերի գյուղապե-

տարան << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ

օրենքի 14-րդ հոդված

Հայտարարություն

ՀՀ Տավուշի մարզի Բերքաբերի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի հետևյալ թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

Տավուշի մարզի Բերքաբերի գյուղապետարանի աշխատակազմի 1 – ին կարգի մասնագետի / ծածկագիր 3.2-2 / :

Առաջին կարգի մասնագետը

ա) կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով:
բ) կատարում է հարկերի և տուրքերի պարտադիր վճարների, վարչական գանձումների , տույժերի, տուգանքների , վարձավճարների հավաքագրումը և հաշվառումը .
գ) ստանում , մուտքագրում և վճարում է աշխատավարձերը , գործուղումները և դրամական այլ նըպաստները .
դ) վարում է է դրամարկղային գիրքը.

ե) քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում է դիմումներում և բողոքներում բարձրացված հարցերը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում նախապատրաստում պատասխան.

զ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն

բ) ունի << Համայնքային ծառայության մասին >> , < <Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքների ,աշխատակազմի կանոնադրության և լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Մրցույթին մասնակցելու համար դիմողը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով)

բ) Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դպլոմ(ների),վկայականների(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից)պատճենները՝ բնօրինակների հետ միասին :

գ) <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ,, ե ¨ կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են նաև զին գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման պատճենները կամ համապատասխան տեղեկանք

դ) մեկ լուսանկար (3 x 4 չափի)

ե) անձնագրի պատճենը

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:Փաստաթղթերը ընդունվում են Բերքաբերի գյուղապետարանում ամեն օր ժամը 10-ից 18-ը՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Բերքաբերի գյուղապետարանի աշխատակազմ (հասցեն՝ գյուղ Բերքաբեր հրապարակ 4)

Մրցույթը կկայանա 2014 թ. նոյեմբերի 21-ին ժամը 12-ին Բերքաբերի գյուղապետարանում

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014 թ. նոյեմբերի 4-ը

Հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ գ. Բերքաբեր

հեռ.՝ 098 00 80 13

էլ. փոստ՝ berqaber.tavush@mta.gov.am